

ԼԻԼԻԹ ՀՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., դրցենս

lilithovannisan@yahoo.com

ID 0009-0007-7896-3922

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-89

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ

1878 թ. ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1996-2018)*

Ամփոփում

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակի հաղթանակն ամրապնդեց ռուսական պետության դիրքերը միջազգային ասպարեզում: Պատերազմի՝ ամփոփման ենթակա արդյունքներից էր Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցը:

1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի հաշտության բանակցություններում սովթանական կառավարության գիտությամբ և թույլտվությամբ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Ներսես Բ Վարժապետյանը, Վանի հոգևոր առաջնորդ Մկրտիչ (Հայրիկ) Խրիմյանը, բարձրաստիճան հոգևորական Խորեն Նարբեյը (Խորեն Գալֆայան) և Երիտասարդ ձեռնարկատեր Պողոս Նուբարը բարձրացրին Օսմանյան կայսրության սահմաններում Արևմտյան Հա-

* Ներկայացվել է 14.II.2025 թ., գրախոսվել է 18.II.2025 թ., ընդունվել է դրագրության 20.VI.2025 թ.:

յաստանի ինքնավարության հարցը: Պատմաբանների գնահատմամբ, նրանց ծրագրերին բնորոշ էին «խեղճությունը», «համեստությունը», իրականացման «երերուն մեխանիզմները», որոնք բացատրվում են թուրքահպատակ հայի հոգեբանական գործոնով: Ավելին, հայ գործիչների ծրագրային ձևակերպումները փոխամածայնեցված չեն, գործողություններն անհետևառական էին ու անվճռական, ինչի հետևանքով մեծ տերությունները դրանց լուրջ չեն վերաբերվում, իսկ օսմանյան կառավարությունը հայ գործիչների ջանքերն օգտագործում էր մեծ տերությունների և հայ ազգային շրջանակների իրական շահերն ու հետաքրքրությունները շոշափելու համար:

Մեծ տերությունների քաղաքականության թալանչիական էության և սովորանական կառավարության հակահայկական քաղաքականության հետ մեկտեղ միջազգային ատյաններում Հայկական հարցը բարձրացնող հայ գործիչների դիվանագիտական ունակությունների և հմտությունների բացակայությունն Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը ձախողող հիմնական պատճառներից էր:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, ինքնավարություն, բանակցություններ, Մկրտիչ Խրիմյան, Ներսես Բ Վարժապետյան, Խորեն Նարբեյ, Պողոս Նուբար:

Ներածություն

1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեղլինի պայմանագրերով Արևմտյան Հայաստանի հարցը միջազգայնացվեց: Հույսը

դնելով արտաքին ուժերի վրա և անպատրաստ լինելով զինված պայքարի՝ հայ ժողովուրդն անկարող էր եղել օգտվել 1875–1876 թթ. Բալկանյան ճգնաժամի, ապա 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի շնորհիվ ստեղծված միջազգային բարեպատեհ իրադրությունից և կազմակերպել համընդիանուր զինված հակաթուրքական ապստամբություն։ Այդ պատճառով էլ պատերազմից հետո նրա ակնկալիքն օսմանյան իշխանություններից և միջազգային դիվանագիտությունից ինքնավարությունն էր Օսմանյան կայսրության կազմում։

1878 թ. Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագրերը հայաստանյան պատմագիտության մեջ վերլուծված և արժևորված են Հայկական հարցի բազմաշերտ պատմության համատեքստում։ Մասնավորապես, Գ. Գալոյանը, Է. Կոստանդյանը, Ռ. Հովհաննիսյանը, Վ. Թունյանը, Ա. Մարությանը, Ս. Պողոսյանը վերարժենորել են XIX դ. վերջին քառորդին եվրոպական տերությունների հետ աշխատելու ուղղությամբ հայ գործիչների մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը, արտաքին իրադրության փոփոխությունները հաշվարկելու և հօգուտ ազգային շահերի օգտագործելու նրանց ճկունությունը, դրան խոչընդոտող գործոնները, նորահայտ վավերագրերի հիման վրա ներկայացրել ու գնահատել են Հայկական հարցում մեծ տերությունների շահերն ու հետաքրքրությունները, կիրառած դիվանագիտական հնարքները։

Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցը ռուսական կողմի հետ Ներսես Բ Վարժապետյանի և Մկրտիչ Խրիմյանի բանակցություններում

1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին ստորագրված Սան Ստեֆանոյի հաշտության նախնական պայմանագիրն էապես ամրապնդում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերը միջազգային ասպարեզում¹, իսկ Օսմանյան կայսրությունը Ենթարկվում էր մասնակի բաժանման²: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները պաշտպանում էին Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը՝ այն համարելով թուրքական բռնակալությունից ազատվելու իրենց հնարավորություններից մեկը³: Եվրոպական տերությունները Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը դիտում էին որպես իրենց շահերի դեմ ուղղված պայմանագիր՝ պահանջելով վերանայել այն: Հայկական շահի տեսանկյունից Սան Ստեֆանոյի պայմանագիրն առաջինն է, որով Հայկական հարցը դարձավ միջազգային քննարկման առարկա: Թուրքիան ընդունում էր Հայաստան աշխարհագրական և պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շարքում⁴:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքանության փաստաթղթերում (1828-1923). 1972, 83-98: Сб. նաև Сборник договоров России с другими государствами (1856-1917). 1952, 159-175.

² **Դүնյան**. 1997, 3.

³ **Պողոսյան**. 2018, 11:

⁴ **Գալոյան**. 2004, 266; **Կոստանդյան**, **Հովհաննիսյան**. 2010, 435-436:

Ոռուաստանը, այնուամենայնիվ, չկարողացավ ամբողջությամբ և վերջնականորեն ամրապնդել իր ռազմական հաղթանակն ու ձեռքբերումները: Դրանք դարձան մեծ տերությունների դիվանագիտական շահարկումների ու խարդավանքների առարկա: Ավելին, Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով, թուրքական կառավարության խորամանկ քայլերով, հայ և քուրդ ժողովուրդներն ինչոր առումով կանգնեցին միմյանց դեմ և ոչ թե կողը կողքի⁵:

Սովորանի կառավարությունն օգտագործում էր հայկական գործոնը, որպես զոնդաժի միջոց. մի կողմից՝ հայ ազգային շրջանակների, մյուս կողմից՝ մեծ տերությունների իրական շահերն ու հետաքրքրությունները շոշափելու նպատակով⁶: Սան Ստեֆանոյի բանակցությունների ընթացքում սովորան Արդուլ Համիդ II-ի գիտությամբ այնտեղ

⁵ **Կոստանդիան, Հովհաննիսյան.** 2010, 436:

⁶ **Դանիելյան.** 2007, 77-84: Այդ ժամանակ արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչների վերնախավում ծևավորվել էին մի քանի ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը Հայկական հարցի լուծումը կապում էր կոնկրետ մեծ տերության հետ: Բարձրաստիճան հիգնորականներ Խորեն Նարեկը և Մատթեոս Իզմիրյանը գտնում էին, որ միայն Ռուսաստանը կարող էր դիմակայել Թուրքային, մանավանդ, որ պատերազմը սկսվել էր քրիստոնյաների ազատության կարգախոսով: Իսկ Մկրտիչ Խրիմյանի և Գրիգոր Օոյյանի համոզմամբ, Հայկական հարցի լուծումն ուղղակիորեն կապված էր Անգլիայի մերձավորարևելյան շահերի ու քաղաքականության հետ: Նաև կային թուրքական կառավարության հետ անմիջական բանակցություններ վարելու կողմնակիցներ, որոնք «թուրքական պետական ապարատում և տնտեսության մեջ պաշտոններ գրաված անձինք էին՝ էֆենդիական դասի մարդիկ» (**Կոստանդիան, Հովհաննիսյան.** 2010, 431):

Էին գտնվում Հայոց ազգային ժողովի կողմից լիազորված պատվիրակությունը՝ Ներսես Բ Վարժապետյանի գլխավորությամբ, և Մկրտիչ Խրիմյանի պատվիրակությունը: Հայ գործիչները բանակցություններ էին վարում ռուսական պատվիրակության ղեկավարի՝ Թուրքիայում Ռուսաստանի նախկին դեսպան Նիկոլայ Իգնատևի հետ, «հայկական անկախ պետություն» ստեղծելու վերաբերյալ: Սակայն վերջինս չխոստացավ պաշտպանել այդ գաղափարը Բեռլինի վեհաժողովում⁷: Շեշտելով այս տեղեկության հավաստիությունը՝ Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ դրա պատճառն անզիհական դիվանագիտության թուրքանպատ միջամտությունն էր⁸: Այնուհետև, անդրադառնալով սովթանի կողմից Ն. Վարժապետյանի և Մ. Խրիմյանի մեկնումը Սան Ստեֆանո թույլատրելու նպատակներին՝ պատմաբանը նշում է, որ նա «այդ քայլով նպատակ է ունեցել իր համար պարզելու, թե հայերը վերջնականապես ինչի են ծգտում»⁹: Հարցն այն է, որ պատրիարքը մշտապես հավաստիացնում էր սովթանին, որ հայերն անջատողական ծգտումներ չունեն: Դրանով Ն. Վարժապետյանն արտահայտում էր իր անձնական տեսակետը, որն աղերս չուներ արևմտահայության ազատագրական ծգտումների հետ:

⁷ Salahi. 1987, 47.

⁸ Գալոյան. 2004, 265:

⁹ Գալոյան. 2004, 265:

Ներսես Բ Վարժապետյանի «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիրը»

Ն. Իգնատևի հետ բանակցություններից հետո Ն. Վարժապետյանի գլխավորությամբ ստեղծված հանձնախումբը պատրաստեց «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիր», որն արտահայտում էր մի կողմից պատրիարքի, իսկ մյուս կողմից՝ ռուսական դիվանագիտության զուապ ու զգուշավոր դիրքորոշումը հայկական վիլայեթների իրավական կարգավիճակի հարցում: Այդ ծրագիրը 1878 թ. մարտի 15-ին արքեպիսկոպոս Խ. Նարբեյը Պետերբուրգում ներկայացրեց ցար Ալեքսանդր II-ին¹⁰:

Ըստ Ն. Վարժապետյանի ծրագրի, Հայաստանն ունենալու էր ցարի համաձայնությամբ սուլթանի կողմից ընտրված հայ-լուսավորչական ընդհանուր կառավարիչ: Հայաստանի նահանգապետերը և գավառապետերը ևս լուսավորչական էին լինելու: Նրանց ընտրելու էր Հայոց ազգային ժողովը, իսկ պաշտոններում հաստատելու էր սուլթանը: Հայաստանի ոստիկանությունը կազմվելու էր հայերից: Արդարադատությունը ևս իրականացնելու էին հայերը՝ շարիաթի սկզբունքներից ազատ: Վերացվում էին քրդերի բոլոր արտօնությունները: Հարկերի բաշխման հիմքում դրվելու էր արդարության սկզբունքը: Հայերի խախտված հողային իրավունքները վերականգնվելու էին: Հայաստանում թուրքերը զինաթափվելու էին: Հայաստանն ունենալու էր Ռուսաստանի հավանությամբ սուլթանի կող-

¹⁰ ԼՅօ. 1915, 60-63:

մից վավերացված վարչական նոր կանոնադրություն: Երաշխավորվելու էր Զեյթոնի ինքնավարությունը¹¹:

Փաստորեն, ըստ ներկայացված ծրագրի, ինքնավարություն ստանալու դեպքում Արևմտյան Հայաստանը դրվելու էր Թուրքիայի և Ռուսաստանի համատեղ կառավարման ներք՝ մնալով Օսմանյան կայսրության կազմում, այսինքն՝ Հայկական հարցն արմատապես չէր լուծվելու: Այսպիսով, «սովթանը համոզվեց, որ պատրիարքը կամ դիվանագիտություն էր խաղում, կամ, իրոք, չգիտեր, թե ինչի են ձգտում արևմտահայերը»¹², - եզրակացնում է Գ. Գալոյանը: Պատմաբանի գնահատմամբ, Պատրիարքարանի ծրագրի «խեղճությունը բացատրվում էր արևմտահայերի հոգեբանական գործոնով»¹³: Դարեր շարունակ ապրելով Օսմանյան կայսրությունում, նրանց համար դեռևս դժվարամարս էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը: XIX դ. երկրորդ կեսին, երբ առաջին անգամ էր բարձրացվում այդ հարցը, ընդգծվում էր Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն ստանալու պահանջը: Արևմտահայ մտավորականության մի ստվար մասը կարծում էր, թե առանց ապստամբության, սովորական ողորմածությամբ հայերը կարող են ձեռք բերել քաղաքական և քաղաքացիական ազատություններ¹⁴: Գ. Գալոյանի բնութագրմամբ, «չգիտես ում կողմից

¹¹ **Leto.** 1915, 61-62:

¹² **Գալոյան.** 2004, 265, 272:

¹³ **Գալոյան.** 2004, 270:

¹⁴ **Գալոյան.** 2004, 270:

լիազորված», «պետություն չներկայացնող» Պողոս Նուբար փաշայի ծրագիրն էլ չէր համաձայնեցվել պատրիարքի հետ: Դրանում անգամ ակնարկ չկար Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին, գլխավոր պահանջը հանգում էր Երկրամասում Եվրոպական տերությունների հովանավորությամբ հայ նահանգապետի նշանակմանը¹⁵: Այդ ծրագիրը մեծ տերություններին ներկայացնելու և նրանց աջակցությունը ստանալու առաքելությամբ Պողոս Նուբարը մեկնել էր Եվրոպա: Նշված երկու ծրագրերը փոխհամաձայնեցված չէին, դրանցում առկա էր ծևակերպումների անհետևողականություն, անտեսված էր ազատատենչ ժողովրդին վճռական պայքարի մղելու գործոնը: Դրանք լուրջ տարածայնություններ առաջացրին հայ հասարակության մեջ՝ պառակտելով ու ջլատելով նրա ուժերը: Պատահական չէ, որ այդ ծրագրերը լրջությամբ չընդունեց հասցեատերերից և ոչ մեկը, թեև նրանք արտաքուստ «բարյացակամությամբ» ծանոթացան դրանց¹⁶: Միննույն ժամանակ, Ն. Վարժապետյանի ծրագրի նկատմամբ բացասական վերաբերմունք ուներ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ ԴԿոստանդնուպոլսեցին (1866–1882), քանի որ մի կողմից՝ քաջատեղյակ էր ոռաական արքունիքի տրամադրվածությանը Հայկական հարցում և Մ. Խրիմյանի առաքելության

¹⁵1877 թ. Բովլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը տերություններին առաջարկել էր Բովլղարիայի կառավարիչ նշանակել Նուբար փաշային, ինչը դրական արձագանք էր ունեցել, սակայն չիրականացավ ոուսթուքական պատերազմի հետևանքով (**Պողոսյան.** 2018, 77):

¹⁶ **Գալյուան.** 2004, 271:

նկատմամբ, մյուս կողմից էլ վիրավորված էր, որ Ն. Վարժապետյանն իրեն չէր ներգրավել ծրագրի կազմմանն ու չէր տեղեկացրել իս. Նարբեյի առաքելության մասին: Ի դեպ, այս փաստի առիթով Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ «հայ գործիչներից շատերի մեջ միշտ էլ սեփական պատվախնդրությունը բարձր է դասվել ազգի շահերից»¹⁷: Իսկ Ս. Պողոսյանը հավելում է, որ հայ ազդեցիկ գործիչներից շատերի սնափառությունն ու անզիջում կեցվածքը թույլ չտվեցին ընդունել և օգտագործել Պողոս Նուբարի դիվանագիտական ընդունակությունները¹⁸: Պատմաբանների անկեղծ ընդհանրացումը, ցավոք, բնութագրական է նաև մեր օրերում:

Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի հարցում հայ գործիչների անմիաբանության հետևանքները

Գ. Գալոյանի համոզմամբ, Աբդուլ Համիդը քաջատեղյակ էր իս. Նարբեյի ու Մ. Խրիմյանի առաքելություններին և հեռատեսորեն չէր խոչընդոտել դրանց ընթացքը՝ հասկանալով, որ «Երկու լարերի վրա հայ գործիչների խաղը ոչ միայն գրգռելու էր Եվրոպական տերություններին և Ռուսաստանին միմյանց դեմ, այլև բոլորի անվտահությունն էր առաջացնելու հայերի անկեղծության նկատմամբ: Բացի այդ ... Աբդուլ Համիդը ձգտում էր ստեղծել տպավորություն, որ հայերը, դիմելով Եվրոպական տերություննե-

¹⁷ Գալոյան. 2004, 272:

¹⁸ Պողոսյան. 2018, 93:

րին, ... ձգտում էին հասնել Սան Ստեֆանոյի պայմանագրի փոփոխմանը, որպեսզի իրենց բախտի տնօրինությունը չտրվեր միայն Ռուսաստանին»¹⁹:

Աբդուլ Համիդի հաշվարկները սխալ դուրս չեկան. ո՞չ Ռուսաստանը և ո՞չ էլ արևմտաԵվրոպական որևէ տերություն չխոստացան պաշտպանել Հայ դատը Բեռլինի վեհաժողովում: Տեղյակ չլինելով մեծ տերությունների դիվանագիտական «խաղերին»՝ Ն. Վարժապետյանը, Խ. Նարբեյը և Մ. Խրիմյանն այդպես էլ չկարողացան ընկալել, որ Հայկական հարցում անգլիական կառավարության դիրքորոշումը հակահայկական էր²⁰: Այս առիթով Գ. Գալոյանը նկատում է, որ անգլիական կառավարությունը, չխոչընդոտելով հայ պատվիրակների գործունեությանը, հետապնդում էր «մշուշապատ խոստումներով մոլորության մեջ գցելու միջոցով» արևմտահայերին «Ռուսաստանից կտրելու» նպատակ²¹: Եվ սա այն դեպքում, երբ Մ. Խրիմյանի և Խ. Նարբեյի գործունեությունը «երկակի խաղի» տպավորություն էր թողնում Եվրոպական դիվանագիտական շրջանակներում: Հարցն այն է, որ Խ. Նարբեյը պատրիարքից հանձնարարություն ուներ համոզել ռուսական կայսրին, որ հայերի միակ հույսը Ռուսաստանն է, մինչդեռ թուրքական և անգլիական իշխանությունները կասկածում էին, թե Ն. Վարժապետյանը գաղտնի կապերի մեջ էր

¹⁹ Գալոյան. 2004, 273; Գալոյան. 1996, 3-18; Գալոյան. 1997, 7-21; Պողոսյան. 2007, 36-48:

²⁰ Գալոյան. 2004, 280-281, 285-286, 287, 289-290; Կոստանդյան, Հովհաննիսյան. 2010, 442:

²¹ Գալոյան. 2004, 287:

ոռւսների հետ, իսկ ոռւս գործիչները պատրիարքին համարում էին Անգլիայի և սովորանի դրածո²²:

Միայն Բեղլինի վեհաժողովից հետո հայերը համոզվեցին, որ Անգլիան անկեղծ չէր իրենց նկատմամբ, իսկ Ռուսաստանը շահագրգոված չէր, որպեսզի Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրվեր, քանի որ դրա բնականոն հետևանքը կարող էր լինել Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը, և Ռուսաստանը կզրկվեր Արևելյան Հայաստանից²³: Բեղլինի վեհաժողովիւմ Անգլիան Կիպրոսի անեքսիայի դիմաց իր պարտքը վճարեց Թուրքիային՝ առանց մտահոգվելու, թե ինչ կլիներ այդ դեպքում հայերի հետ²⁴: Ըստ Էռլթյան, բարենորոգումներ անցկացնելը թողնվեց Աբդով Համիդի հայեցողությանը: Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը նոյնիսկ քննարկման չդրվեց²⁵: Բեղլինի պայմանագրի 61-րդ հոդվածին լրացնելու էր գալիս 62-րդ հոդվածը, ըստ որի, Օսմանյան կայսրության տարածքում դավանության տարբերությունը չէր կարող առիթ տալ որևէ հպատակի իրավունքները զանց առնելու բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու կամ տարբեր ազատ մասնա-

²² Գալրյան. 2004, 289-290:

²³ Գալրյան. 2004, 290:

²⁴ Գալրյան. 2004, 294:

²⁵ Գալրյան. 2004, 296:

գիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությանը:

Բացի այդ, բոլոր հպատակներին, առանց կրոնական խտրության, թույլատրվում էր ազատ վկայություն տալ դատարանում²⁶: Եվրոպական տերությունները՝ առաջին հերթին Անգլիան, Ռուսաստանին զրկելով Հայկական հարցում ունեցած մենաշնորհից և վերացնելով Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրականացման հստակ երաշխիք հանդիսացող 25-րդ և 27-րդ հոդվածները, Բեռլինի պայմանագրում չառաջարկեցին նման երաշխիքային հոդվածներ, ինչը թուրքական իշխանություններին հնարավորություն տվեց ոչինչ չձեռնարկել 61-րդ և 62-րդ հոդվածների կատարման ուղղությամբ²⁷: 1879 թ. հունվարի 27-ին Կոստանդնուպոլիսի ռուս-թուրքական «Խաղաղության մասին» վերջնական պայմանագրով վերահաստատվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ և 27-րդ հոդվածները, որոնք Բեռլինի պայմանագրով չեն վերացվել ու փոփոխության չեն ենթարկվել²⁸:

Հայ պատվիրակների գործունեության անմիաբանությունը վկայում էր հայկական գործոնի թուլության և անկազմակերպվածության մասին: Բեռլինի վեհաժողովին ներկայացվեց երկու հայկական ծրագիր՝ Մ. Խրիմյանինը և Խ. Նարեկյանը, ինչպես նաև Պողոս Նուբար փաշայի ծրա-

²⁶Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). 1972, 128-129:

²⁷ Մարտության. 2014, 61:

²⁸ Մարտության. 2014, 62:

գիրը: Դրանցից առաջինը հանգում էր Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավար Հայաստանի և Կիլիկիայի ստեղծմանը Եվրոպական հովանավորության ներքո՝ դրանում ներառելով բարենորոգվելիք հայկական նահանգները, Էրզրումի ու Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արդնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը և Տրապիզոնի ու Բաթումի միջև գտնվող Ռիզե նավահանգիստը, որտեղ հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում: Ըստ Երկրորդի, նախատեսվում էր Արևմտյան Հայաստանում կատարել բարենորոգումներ՝ ուղղված արևմտահայերի անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը: Առաջարկվող բարենորոգումներն էլ խիստ չափավոր էին և իրականանալի:

Եզրակացություններ

Արևմտյան Հայաստանի ազատագրման վերաբերյալ հայ գործիչների մոտեցումների ու կազմած ծրագրերի տարբերությունները պայմանավորված էին օսմանյան «ժառանգության» բաժանման հարցում մեծ տերությունների դիրքորոշմամբ ու հակասություններով²⁹: Հայկական գործոնը զրոյական դերակատարում ուներ Սան Ստեֆանոյի ու Բեոլինի պայմանագրերում Արևմտյան Հայաստանին և արևմտահայությանը վերաբերող հոդվածների ձևակերպման գործում: Միևնույն ժամանակ հայ գործիչները հույս ունեին Եվրոպական մեծ պետությունների օգնութ-

²⁹ **Түнյян.** 1998, 76, 102-108.

յամբ ազատվել թուրքական դժնիակ լծից, ստանալ ինքնավարություն, իսկ հետագայում, ինչու չէ, հասնել անկախության: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը ճիշտ չէր կողմնորոշվում միջազգային բարդ ու խճճված հարաբերություններում, քանի որ պետականության երկարատև բացակայության պայմաններում չուներ պատրաստված դիվանագետներ:

Արևմտահայության հոգևոր և քաղաքական ղեկավարությունը ստանձնած Կ. Պոլսի Պատրիարքարանը դեմ էր հայերի զինված ելույթներին՝ հուսալով, որ «Օսմանյան հայրենիքին» ցուցաբերած հավատարմության և մեծ պետությունների աջակցության շնորհիվ հայ ժողովրդին կտրվի սպասված ինքնավարությունը, բայց չարչար սխալվեցին³⁰: Մեծ տերությունների քաղաքականության թալանչիական էռության և սովորական կառավարության հակահայկական քաղաքականության հետ մեկտեղ միջազգային ատյաններում Հայկական հարցը բարձրացնող հայ գործիչների դիվանագիտական ունակությունների և հմտությունների բացակայությունն Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը ձախողող հիմնական պատճառներից էր:

Գրականություն/References/Литература

1. **Գալոյան Գ.** 1996, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թվականի վեհաժո-

³⁰Պոլսիան. 2007, 48:

- ղովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 3, էջ 3-18:
- Galoyan G.** 1996, Self-government problem in the Western Armenia on the eve of the Berlin congress in 1878, "Herald of the Social Sciences", Yerevan, № 3, pp. 3-18.
2. **Գալոյան Գ.** 1997, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 1, էջ 7-21:
- Galoyan G.** 1997, Question of the West Armenian self-government at 1878 Berlin congress, "Herald of the Social Sciences", Yerevan, № 1, pp. 7-21.
3. **Գալոյան Գ.** 2004, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, «Գիտություն», 822 էջ:
- Galoyan G.** 2004, Armenia in the global confrontations of the Great Powers (from the XVI century to 1917), Yerevan: Gitutyun, 822 p.
4. **Դանիելյան Է.** 2007, Թուրքիայի դերակատարությունը Հայկական հարցի միջազգայնացման գործընթացում (1876-1878 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, № 2, էջ 77-84:
- Danielyan E.** 2007, The role of Turkey in the process of internationalization of the Armenian question (1876-1878), "Bulletin of Yerevan university", Yerevan, № 2, pp. 77-84.
5. **Լեօ.** 1915, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, «Տպարան Ն. Աղանեանցի», 404 էջ:
- Leo.** 1915, Documents of the Armenian Question, Tiflis: Printing house of N. Aganyants, 404 p.
6. **Կոստանդյան Է., Հովհաննիսյան Ռ.** 2010, Հայկա-

կան հարցի միջազգայնացումը, «Հայոց պատմություն», h. III, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, «Զանգակ-97», էջ 429–447:

Kostandyan E., Hovhannisyan R. 2010, Internationalization of the Armenian Question, "History of Armenia", vol. III, first book (the second half of the XVII – the end of the XIX century), Yerevan: Zangak-97, pp. 429-447.

7. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923) 1972, խմբ.՝ պրոֆ. Զ. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան», 809 էջ:
Armenia in documents of international diplomacy and Soviet foreign policy (1828-1923) 1972, ed. by prof. J. Kirakosyan. Yerevan: Hayastan, 809 p.
8. **Մարուքյան Ա.** 2014, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, Պատմության ինստիտուտ, 332 էջ:
Marukyan A. 2014, Problems of overcoming the consequences of the Armenian Genocide: historical and legal grounds, Yerevan: Institute of History, 332 pp.
9. **Պողոսյան Ս.** 2007, Հայաստանի ինքնավարության ծրագրերը Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնֆերանսների նախօրեին, «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Ապրիլ, էջ 36–48:
Poghosyan S. 2007, Plans of Armenian sovereignty on the eve of the conferences of San Stefano and Berlin, "Etchmiadzin" Journal of religious and armenological studies, The Mother See of Holy Etchmiadzin, April, pp. 36-48.

10. **Պողոսյան Ս.** 2018, Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ., Երևան, «Տիր», 144 էջ:
Poghosyan S. 2018, Plans for the autonomy of Armenia in 1878, Yerevan: Tir, 144 pp.
11. Сборник договоров России с другими государствами (1856-1917) 1952. Сост. И. В. Козьменко. Под ред. Е. А. Адамова. Москва, "Госполитиздат", 463 с.
Collection of treaties of Russia with other states (1856-1917) 1952, Comp. by I.V. Kozmenko, edited by E.A. Adamov, Moscow: Gospolitizdat, 463 p.
12. **Тунян В.** 1997, Россия и Армения 1878-1897, Ереван, "Амарас", 119 с.
Tunyan V. 1997, Russia and Armenia 1878-1897, Yerevan: Amaras, 119 p.
13. **Тунян В.** 1998, Россия и Армянский вопрос, Ереван, "Амарас", 241 с.
Tunyan V. 1998, Russia and the Armenian Question, Yerevan: Amaras, 241 p.
14. **Salahi S.** 1987, The Ottoman Armenians. Victims of Great Power Diplomacy, London, K. Rustem and Brother, 426 p.

Лилит Гр. Оганисян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Планы автономии Западной Армении 1878 года в оценках армянской историографии (1996-2018)

Резюме

Победа русской армии в русско-турецкой войне 1877-1878 годов значительно укрепила позиции России на международной арене. Одним из итогов войны стал вопрос о статусе Западной

Армении, часть которой временно оказалась под контролем России.

В 1878 году, во время мирных переговоров в Сан-Стефано, а затем накануне Берлинского конгресса, Армянский патриарх Константинополя Нерсес II Варжапетян, духовный лидер Вана Мкртич (Айрик) Хримян, высокопоставленный священник Хорен Нарбей (Хорен Галфаян), а также молодой предприниматель Погос Нубар - с разрешения султанского правительства – подняли вопрос об автономии Западной Армении в границах Османской империи. По мнению историков (Г. Галоян, Э. Костандян, Р. Оганисян, С. Погосян), их инициативы отличались ограниченными ресурсами, скромными масштабами и неопределенностью действий. Кроме того, выдвинутые требования армянских деятелей не были согласованы между собой; их действия отличались непоследовательностью и нерешительностью. Это привело к тому, что великие державы не воспринимали инициативу всерьез, а османское правительство использовало эти попытки как средство дипломатического зондажа.

Наряду с экспансионистской политикой великих держав и антиармянским курсом султанского правительства, отсутствие дипломатического опыта у армянских деятелей, поднимавших армянский вопрос на международной арене, стало одной из главных причин провала в решении вопроса Западной Армении.

Ключевые слова: Западная Армения, Османская империя, автономия, переговоры, Мкртич Хримян, Нерсес II Варжапетян, Хорен Нарбей, Погос Нубар.

**Lilit Hr. Hovhannisyan, Institute of History of the NAS RA,
Ph.D in History, Associate Professor, Plans for the Autonomy of
Western Armenia in 1878: Assessments in Armenian
Historiography (1996-2018)**

Summary

The victory of the Russian army in the Russo-Turkish war of 1877-1878 significantly strengthened the position of Russia on the international stage. One of the outcomes of the war was the issue of the status of Western Armenia, part of which had come temporarily under Russian control.

In 1878, during the peace negotiations in San Stefano and later on the eve of the Berlin Congress, several Armenian leaders - including the Armenian Patriarch of Constantinople Nerses II Varzhapetyan, the spiritual leader of Van Mkrtich (Hayrik) Khrimyan, high-ranking priest Khoren Narbey (Khoren Galfayan), and the young entrepreneur Boghos Nubar - raised the issue of autonomy for Western Armenia within the borders of the Ottoman Empire, with the permission of the Ottoman government.

According to historians (G. Galoyan, E. Kostandyan, R. Hovhannisyan, S. Poghosyan), their plans were characterized by a lack of resources, limited scale, and an unclear strategy for implementation. Moreover their proposals were uncoordinated, and their actions were marked by inconsistency and indecisiveness. As a result, the great powers did not take the initiative seriously, while the Ottoman authorities exploited it as a tool for diplomatic probing.

In addition to the exploitative policies of the great powers and the anti-Armenian stance of the Sultan's government, the lack of diplomatic experience among the Armenian representatives advocating the Armenian cause on the international stage was one of

the main reasons for the failure to resolve the issue of Western Armenia.

Key words: Western Armenia, Ottoman Empire, autonomy, Mkrtich Khrimyan, Nerses II Varzhapetyan, Khoren Narbey, Boghos Nubar.